



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՕՐԻՅՆԷՔ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Շաբաթ, 19 Փետրուարը Ս. Սարգիս Չօրավարի եւ իր որդւոյն՝ Մարտիրոսի տօնն է:

Այս տօնը անուանակոչութեան տօնն է նաեւ Փասատիւնայի Ս. Սարգիս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ:

Այս առիթով, Կիրակի, 20 Փետրուարին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցանէ, մատաղօրհնէք պիտի կատարէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Փասատիւնայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ:

Ս. Խորանին պիտի սպասարկեն Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիւմեան եւ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Խորէն Զինյ. Պապօշեան:

### EPISCOPAL DIVINE LITURGY AND BLESSING OF MADAGH ON THE NAME DAY OF ST. SARKIS CHURCH IN PASADENA

On Saturday, February 19<sup>th</sup>, 2011, the Armenian Church will celebrate the Feast of St. Sarkis and his son Mardiros. This feast is also a celebration of the name day of St. Sarkis Church in Pasadena.

On this occasion, on Sunday, February 20<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy, deliver the sermon, and bless "madagh" at St. Sarkis Church.

Very Rev. Fr. Barthev Gulumian and Parish Pastor Rev. Fr. Khoren Babochian will assist at the altar.

\*\*\*

**Ս. ՂԵՆՈՆՂԵԱՆՑ ԲԱՅԱՆԱՅԻՑ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ  
ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ ԱՐԵՎԵԼԵԱՆ,  
ԱՐԵՄՍԵԱՆ ԵՒ ԲԱՆԱՏԱՅԻ ԹԵՄԵՐՈՒ ՀՈԳԵՒՐԱԿԱՆԱՑ  
ԴԱՍԵՐՈՒՆ**

Մեր եկեղեցին 1 Մարտին պիտի նշէ Ս. Ղեւոնդեանց տօնը:

Այս տօնին առիթով, ամեն տարի տեղի կ'ունենայ հոգեւորականաց համագումար, իսկ երկու տարին անգամ մը, համաձայն Հիւսիսային Ամերիկայի երեք Թեմերու աւանդութեան, համագումարը կը մեկտեղէ Արեւելեան, Արեւմտեան ու Բանատայի թեմերու Առաջնորդներն ու հոգեւորականաց դասերը:

Միացեալ համագումարը հերթաբար կը կազմակերպուի թեմերուն կողմէ:

Այս տարի, միացեալ համագումարի հիւրընկալն է Բանատայի թեմը. համագումարը տեղի պիտի ունենայ տօնէն շաբաթ մը առաջ, Թորոնթօ քաղաքին մէջ, կը սկսի Երկուշաբթի, 21 Փետրուարին եւ պիտի շարունակուի մինչեւ Հինգշաբթի, 24 Փետրուարի յետմիջօրէին, Նախագահութեամբ երեք թեմակալ Առաջնորդներուն, Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Բարձր. Տ. Օշական Արք. Չօլոյեանի եւ Բարձր. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը եւ հոգեւորականաց դասու անդամները Բանատա պիտի մեկնին Կիրակի, 20 Փետրուարին եւ պիտի վերադառնան Ուրբաթ, 25 Փետրուարին:

Համագումարի օրակարգին վրայ են Վեհափառ Հայրապետին կողմէ 2011ը «Հայ Մանուկի Տարի» հռչակման առիթով ձեռնարկներ, զեկոյցներ եւ դասախօսութիւններ: Նաեւ տեղի պիտի ունենան եկեղեցական արարողութիւններ ու հոգեւոր խորհրդածութիւններ:

Սրբոց Ղեւոնդեանց Բահանայից տօնին առիթով, երեկոյեան ժամերգութիւն եւ Ղեւոնդեանց Նախատօնակի արարողութիւն պիտի կատարուի Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Առաջնորդ Սրբազանին եւ հոգեւորականաց դասու անդամներուն վերադարձէն ետք, տօնին օրը՝ Երեքշաբթի, 1 Մարտին, Նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր եւ մասնակցութեամբ Թեմիս Հոգեւորականաց Դասուն, Ս. Պատարագ պիտի մատուցուի Կլենտոյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, երեկոյեան ժամը 6:30-ին: Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան:

**BIENNIAL STS. GHEVONTIANK CLERGY CONFERENCE OF THE  
THREE NORTH AMERICAN PRELACIES TO BE HELD IN CANADA**

Tuesday, March 1<sup>st</sup>, 2011 is the Feast of Sts. Ghevontiank. On this occasion, a clergy conference takes place every year within the Western Prelacy and every two years the Prelates and clergy of the three North American Prelacies gather for a joint conference.

This year's conference will take place in Toronto, hosted by the Prelacy of Canada and presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, H.E. Archbishop Oshagan Choloyan (Prelate of the Eastern U.S.), and H.E. Archbishop Khajag Hagopian (Prelate of Canada).

The Prelate and clergy members will depart for Canada on Sunday, February 20<sup>th</sup>, and return on Friday, February 25<sup>th</sup>.

The conference will convene on Monday, February 21<sup>st</sup>, and conclude on Thursday, February 24<sup>th</sup>.

The conference will focus on the "Year of the Armenian Child" proclaimed by H.H. Catholicos Aram I, and will feature lectures and spiritual reflections.

The four-day conference also features special events and services for the community to participate in, which will be held at St. Mary Church in Toronto.

The Feasts of Sts. Ghevontiank and Sts. Vartanank will also be observed within the Western Prelacy upon the return of the Prelate and clergy members.

On Tuesday, March 1<sup>st</sup>, the Feast of Sts. Ghevontiank, the Prelate will preside over Divine Liturgy at St. Mary's Church in Glendale with the participation of the clergy order. Very Rev. Fr. Muron Aznikian will celebrate Divine Liturgy and deliver the sermon. The service begins at 6:30 p.m.

\*\*\*

## **SOL UNFANS VARTANANKS ZORAVARUS**

Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն 3 Մարտը Ս. Վարդանանց Չորավարաց տօնն է:

Չորեքշաբթի, 2 Մարտին, տօնի նախօրէին, երեկոյեան ժամը 7-ին, նախատօնակի արարողութիւն պիտի կատարուի Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազանին եւ մասնակցութեամբ Թեմիս Հոգեւորականաց Դատուն:

Արարողութեան աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

Իսկ տօնին օրը, Հինգշաբթի, 3 Մարտի երեկոյեան ժամը 6:30ին, ու հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, Էնսիւնոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ Հոգ. Ս. Պարթեւ Վրդ. Կիլիմեան:

Թէ՛ նախատօնակի արարողութեան եւ թէ՛ Ս. Պատարագի աւարտին, պիտի երգուին Ս. Վարդանանց տօնին յատուկ շարականներ եւ ազգային երգեր:

## **EVENING SERVICE AND DIVINE LITURGY IN OBSERVANCE OF THE FEAST OF STS. VARTANANK**

Thursday, March 3<sup>rd</sup>, 2011 is the Feast of Sts. Vartanank.

The eve of the feast will be observed On Wednesday, March 2<sup>nd</sup>, with an evening service at St. Sarkis Church in Pasadena presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of the clergy order. The service begins at 7:00 p.m.

On Thursday, March 3<sup>rd</sup>, the Feast of Sts. Vartanank will be observed with Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino presided over by the Prelate and with the participation of clergy members. Very Rev. Fr. Barthev Gulumian will celebrate Divine Liturgy and deliver the sermon. The service begins at 6:30 p.m.

\*\*\*

## ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ



Միջին Արեւելքի Ուղղափառ եկեղեցիներու՝ Ղրպտի Ուղղափառ, Ասորի Ուղղափառ եւ Հայց. Առաքելական եկեղեցիներու Արեւմտեան Միացեալ Նահանգներու Առաջնորդները Հինգշաբթի, 17 Փետրուարին ունեցան իրենց հերթական հանդիպումը, օրակարգի վրայ ունենալով միացեալ ծրագիրներ ու գործակցութեան

Նախագիծեր:

Հանդիպումը տեղի ունեցաւ Ղպտիներու Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Նորթրիճ, հիւրընկալութեամբ Ղրպտի Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Սրապիոն Եպիսկոպոսին:

Ժողովական աշխատանքներու սկսելէ առաջ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ղրպտի Ուղղափառ համայնքի Առաջնորդ Գերշ. Տ. Սրապիոն Եպիսկոպոս, Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Եուճին Քափլան Արքեպիսկոպոս եւ հոգեւորականները միացեալ աղօթքի պահ մը ունեցան, աշխարհի խաղաղութեան, Եգիպտոսի մէջ ամանորի գիշերը ինկած զոհերուն յիշատակին եւ Զրիստոնեայ ժողովուրդին խաղաղութեան համար: Իւրաքանչիւր մասնակից իր լեզուով շարականներ երգելով ու աղօթքով բաժին ունեցաւ արարողութեան մէջ:

Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանային Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Վազգէն Քինյ. Աթմաճեան եւ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Քինյ. Խաչատուրեան:

Ժողովը զեկուցումներ լսեց Կիրակնօրեայ դպրոցներու եւ երիտասարդական խմբակներու համատեղ գործունեութեան ու ծրագիրներուն մասին, կատարելով իրագործումներուն արժեւորումը, եւ մշակեց յառաջիկայ ձեռնարկներու ծրագիրը:

Ժողովը նաեւ որոշեց յաւելեալ մղում տալ երիտասարդական խմբակներու գործունեութեան:

## **PRELATE PARTICIPATES IN MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS**

On Thursday, February 17<sup>th</sup>, 2011, the Council of Oriental Orthodox Bishops held their regular meeting at St. Mary and St. Athanasius Coptic Church in Northridge, hosted by H.G. Bishop Serapion (Prelate of the Coptic Church of the Western U.S.)

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, was accompanied by Rev. Fr. Vazken Atmajian and Rev. Fr. Razmig Khatchadourian.

The day began with a prayer service led by H.E. Archbishop Moushegh Mardirossian, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan (Prelate of the Syriac Church of the Western U.S.) and H.G. Bishop Serapion, and with the participation of clergy members from the three dioceses.

During the meeting, reports were presented on the activities of the Sunday School and Youth Committees, and future collaborative efforts were drafted such as joint Divine Liturgy and clergy meetings.

\*\*\*

## **«ԼԻԼԻԱ ՊԱՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ»Ի 20-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ**

«Լիլիա Պարային Դպրոց»ը Կիրակի, 20 Փետրուարին, երեկոյեան ժամը 6-ին, պիտի տօնէ իր հիմնադրութեան 20-րդ տարեդարձը:

Գլխավորութեամբ տաղանդաւոր արուեստագետ եւ պարուսոյց Լիլիա Մարգարեանի, պարային հանդէսը տեղի պիտի ունենայ Կլենտէյլի «Ալէքս» հանդիսասրահին մէջ:

Առաջնորդ Սրբազան Յայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը: Սրբազան Յօր պիտի ընկերանայ Էնսիլոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան:

## **LILIA DANCE STUDIO 20<sup>TH</sup> ANNIVERSARY CELEBRATION**

On Sunday, February 20<sup>th</sup>, Lilia Dance Studio will celebrate its 20<sup>th</sup> anniversary with a performance at Alex Theatre in Glendale under the direction of instructor Mrs. Lilia Margaryan.

The Prelate will attend and convey his blessings. Rev. Fr. Razmig Khatchadourian will accompany the Prelate.

\*\*\*

## ՏԵԱՌՆԸՆԴՈՒԱԶԻ ԱՄԱՆԴԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ

- Զ.Ս.Ը.Մ.Ի ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱՌԱՋՆՈՐԴ  
ՍՐԲԱԶԱՆԻՆ ՀԵՏ



Կիրակի, 13  
Փետրուարին,  
Հայաստանեայց  
Առաքելական Եկեղեցին  
յատուկ  
արարողութիւններով ու  
աւանդական խարոյկի  
հրավառումով նշեց Յիսուս  
Մանուկի տաճար  
ընծայման՝  
Տեառնընդառաջի  
Նախատօնակը:  
Արեւմտեան մեր

Թեմի եկեղեցիներուն մէջ եւս կատարուեցաւ Տեառնընդառաջի  
Նախատօնակի յատուկ արարողութիւն, որու աւարտին տեղի ունեցաւ  
մանուկներու սուրբ խորանին ընծայման արարողութիւնը: Նաեւ  
հանդիսաւորապէս տեղի ունեցաւ Անդաստանի արարողութիւնը, եկեղեցւոյ  
չորս անկիւններէն օրհնելով աշխարհի չորս անկիւնները, Հայոց  
Հայրապետութիւնն ու Հանրապետութիւնը, քրիստոնեայ  
ղեկավարութիւնները, երկրի անդաստաններն ու բերքերը,  
պտղաբերութիւնը, վանքերը, քաղաքներն ու գիւղերը եւ անոնց մէջ բնակող  
բոլոր մարդիկը:

Համաձայն տարիներու աւանդութեան, Թեմիս բարեջան Առաջնորդ  
Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան հանդիսապետեց Ս. Աստուածածին  
Եկեղեցւոյ արարողութեանց եւ ուղղեց օրուան յատուկ պատգամ մը: Ներկայ  
էին Հոգեւորականաց Դասու անդամներ, ժողովականութեան  
ներկայացուցիչներ, եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամներ, Զ.Ս.Ը.Մ.Ի  
Շրջանային Վարչութեան ու Սկաուտական Խորհուրդի անդամներ,  
սկաուտներ եւ արեւոյշներ, եկեղեցւոյ երիտասարդական միութեան  
անդամներ:

Իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը յիշեցուց, որ Ս. Աթոռոյս  
գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս հայրապետական պատգամով  
2011 տարին նուիրած է Հայ Մանուկին, հետեւաբար, մեր ժողովուրդը  
պարտի ընդառաջել Վեհափառ Հայրապետի պատգամին եւ

համապատասխան նախաձեռնություններով, ու բոլոր մակարդակներու վրայ արժեւորել տարին: Ան վեր առաւ այս տօնին ու Հայրապետական Պատգամին միջեւ կապը եւ շեշտեց, որ այս նպատակին համար, անհրաժեշտ է հայ ծնողներու, դպրոցներու, միութեանց ու կազմակերպութեանց գործակցութիւնը:

Առաջնորդ Սրբազանը կանգ առաւ նաեւ օրուան խորհուրդին վրայ. ան յիշեցուց, որ Աստուածորդւոյն ծնողները, հաւատարիմ մնալով իրենց ազգային ու եկեղեցական ասանդութեանց, մանուկ Յիսուսը Տաճար ընծայաբերեցին: Ան շեշտեց, որ հաւատացեալ հայ քրիստոնեան այսօր կը կանգնի նոյն պարտաւորութիւններուն դիմաց, այսինքն՝ ըլլալ հաւատարիմ եկեղեցական ու ազգային ասանդութեանց, տեր կանգնիլ դարաւոր ժառանգութեանց ու մեր մանուկները դաստիարակել անոնցմով: Աւարտին՝ Առաջնորդ Սրբազանը կոչ ուղղեց որ ազգովին մենք մեզ Աստուծոյ ընծայենք, որպէսզի ամէն օր մեր կեանքերուն մէջ վայելենք երկնաւոր Հօր օրհնութիւնները:

Եկեղեցական արարողութենէն ետք, շրջափակին մէջ տեղի ունեցաւ ասանդական խարոյկի հրավառութիւնը: Երգուեցան ազգային ու հայրենասիրական երգեր: Այնուհետեւ, եկեղեցւոյ հոգաբարձութեան հիւրընկալութեամբ, սկաուտներն ու երիտասարդական միութեան անդամները Առաջնորդ Սրբազանին ու ժողովականութեան ներկայացուցիչներուն հետ ունեցան մտերմիկ պահ մը՝ սիրոյ սեղանի շուրջ: Հանդիսավարն էր Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեան: Ողջոյնի խօսք արտասանեցին հոգաբարձութեան ատենապետ Տիար Չարեհ Մարգարեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջ. Վարչութեան ներկայացուցիչ Փիեռ Մանուկեան եւ Շրջանային Խմբապետ Փօլ Տերտերեան: Յանուն Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, անոնք շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայտնեցին Սրբազան Հօր, իրենց հանդէպ հայրական հոգածութեան համար, ապա անդրադառնալով Վեհափառ Հայրապետի այս տարուան պատգամին, խոստացան, որ տարուան ամբողջ տեւողութեան իրենց կազմակերպելիք բոլոր ձեռնարկները նուիրուած պիտի ըլլան Հայ Մանուկին:

Տեառնընդառաջի տօնին մասին սկաուտներուն հակիրճ բացատրական մը տուաւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, շեշտելով մանաւանդ այն, որ Յիսուս ինք որպէս լոյս եկաւ աշխարհ, որպէսզի իր լոյսով լուսաւորէ մեր հոգիները եւ մեզի լոյսի որդիներ դարձնէ: Ուստի, եզրակացուց ան, իւրաքանչիւր խմբապետ ու պատասխանատու պետք է իր կարգին լոյս դառնայ իրեն յանձնուած պարմանին ու պարմանուհին, զանոնք դաստիարակելով հաւատքի ու ազգային սրբութիւններով:

Եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը, որ անգամ մը եւս բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ու պատասխանատուներուն տարած անսակարկ նուիրումն ու ծառայութիւնը նոր սերունդի առողջ դաստիարակութեան վեհ աշխատանքին մէջ, կոչ ուղղելով ներկաներուն, ծառայութեան ճամբով իրենք զիրենք ընծայելու Աստուծոյ, Հայ եկեղեցիին, Ազգին ու Հայրենիքին: Աւարտին ներկաներուն աղօթագիրք ու յուշանուէրներ բաշխուեցան, եւ ապա միասնաբար երգեցին «Յառաջ Նահատակ» քայլերգը:

## FEAST OF THE PRESENTATION OF OUR LORD CELEBRATION WITHIN THE PRELACY

- HOMENETMEN SCOUTS ANNUAL MEETING WITH THE PRELATE



Monday, February 14, 2011 was the Feast of the Presentation of our Lord to the Temple. The eve of the Feast was celebrated on Sunday, February 13<sup>th</sup>, with evening service and the traditional bonfire in Prelacy churches.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the service at St. Mary's Church in Glendale and also

delivered the sermon. In keeping with tradition, Homenetmen leaders and scouts as well as members of the Armenian Church Youth Association were in attendance.

In his sermon, the Prelate reminded the faithful that H.H. Catholicos Aram I has proclaimed this year the Year of the Armenian Child, stating that it is the responsibility of all to heed this call by His Holiness and give extra focus to the development of our children. The Prelate also spoke of the day's Feast and what it means to us today. He stated that Joseph and Mary presented Jesus to the Temple in keeping with the religious and national traditions of the day, stressing that each and every Armenian Christian today has the same responsibility to remain faithful to our traditions and to instill those traditions in our children. In conclusion, the Prelate urged that as a nation we present ourselves to our Lord and submit ourselves to Him so that we may receive His abundant blessings in our lives.

After the Prelate's sermon, parents approached the altar and handed their children to the Reverend Fathers to present to the altar.

Following the church service, clergy and faithful gathered in the church courtyard for the lighting of the traditional bonfire, around which they sang traditional songs.

The church Board of Trustees then hosted a dinner at the "Armenak Der Bedrossian" Hall. Parish Pastor Rev. Fr. Vazken Atmajian was the Master of Ceremonies. Welcoming remarks were delivered by Board of Trustees Chair Mr. Zareh Markarian, followed by remarks by Homenetmen Regional Executive representative Mr. Pierre Manoukian and Scouting leader Mr. Paul Derderian. On behalf of the greater Homenetmen family, both thanked the Prelate for his paternal care and guidance and gave their word that all their activities throughout this year would be dedicated to the Armenian child.



Very Rev. Fr. Barthev Gulumian then gave a brief explanation to the scouts on the meaning of the day's Feast. Stating that Jesus was sent to illuminate the world and our spirits, he urged the Homenetmen leaders to become the guiding light for our scouts and instruct them on the ways of our faith and national values.

In his message, the Prelate once again commended the members of the Homenetmen Regional Executive and scouts leaders for their dedication to the proper upbringing of our youth, and urged all to serve our faith, our church, nation, and homeland with the same devotion. Attendees then received prayer books and mementos, and the evening came to a close with the collective singing of "Harach Nahadag".

\*\*\*